ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Սերգո Կարապետյանին

Աիդա Իսկոյան-ից
(դիմողի անուն, ազգանուն)

ք.Երևան, (091) 420021, aidaisk@arminco.com
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Կարապետյան,

Խնդրում եմ **«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ին** ընդգրկել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում ենք պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը կտրամադրվի պետական ռեգիստրից կանոնադրության օրինակը ստանալուն պես,
2. Կազմակերպության լիազորված անձի անձնագրի պատճենը,
3. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ,
4. Հետաքրքրվածության նամակ,
5. Հակիրճ վերլուծություն վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝ [signature] Աիդա Իսկոյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

<02> մայիսի 2016 թ.

ՀՀ Գյուղ. Նախ.
Վարչատնտեսական վարչության
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
03 05 2016 թ.
Մուտք N ԱԻ/5120-16

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

վերջին 3 տարիների ընթացքում ՀՀ ԳՆ գործունեության և գյուղատնտեսության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դրական ենք գնահատում գյուղատնտեսության մասնաբաժնի աճը ՀՀ համախառն ներքին արդյունքի մեջ: Նախորդ տարիների համեմատ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն աճել է 7.2 տոկոսով, իսկ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտին բաժին է ընկել արդյունաբերության համախառն արտադրանքի 38.4 տոկոսը: Բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալն աճել է 6.9 տոկոսով, անասնապահությանը՝ 7.8 տոկոսով: 3.2 տոկոսով բարձրացել է վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը, 14.6 հազար հեկտարով ավելացել են մշակովի ցանքատարածությունները:

Հատկանշական է պետական աջակցության ծրագրերի իրականացումը անասնաբուծության տարբեր ճյուղերի և հացահատիկային տնտեսության զարգացման, գյուղատնտեսությունում օգտագործվող նյութական և մարդկային ռեսուրսների մատչելիության բարձրացման, ենթակառուցվածքների բարելավման, ոլորտի տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով:

Իրականացվել են բնական աղետների հետևանքների մեղմման, գյուղատնտեսական կոոպերատիվների խթանման, բույսերի պաշտպանության, գյուղատնտեսական կենդանիների պատվաստման միջոցառումներ, խորհրդատվական աշխատանքներ են տարվել գյուղական համայնքների հետ, համագործակցության հուշագրեր են ստորագրվել ոլորտային միությունների հետ, ընդլայնվել է միջազգային համագործակցությունը:

Ավելի շահեկան կլիներ բարեփոխումներ կատարել անտառտնտեսություններում՝ վստահությունը վերականգնելու և ապօրինի անտառահատումները բացառելու նպատակով, շարունակել գյուղական համայնքների խոշորացման միջոցառումները և ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքները:

«Շրջակա միջավայրի իրավական պահպանության
կենտրոն» ՀԿ-ի նախագահ պրոֆ. Ա.Իսկոյան

ՏԵՂԵԿԱՆՔ

«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ի ծավալած գործունեության վերաբերյալ

«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ն 2014 թվականի փետրվար ամսից (ծրագիրը ավարտվելու է 2016թ.-ի հունիս ամսին) իրականացնում է «Հզորությունների ստեղծում ՀԿ-ների համար՝ շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին արդյունավետ մասնակցության համար՝ համապատասխան գործիքների մշակման եւ իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով» ծրագիրը: Այն իրականացվում է «Բնապահպանական կառավարման հզորացում ոչ- կառավարական կազմակերպությունների կարողությունների զարգացման միջոցով »ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից, իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի միջոցով:

«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող ծագրի նպատակն է բարելավել շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացում հասարակության մասնակցության որակը՝ համապատասխան իրավական գործիքի եւ մասնակցության էլեկտրոնային հարթակի մշակման, ինչպես նաեւ իրազեկվածության մակարդակի բարձրացման ճանապարհով:

ՀՀ գործող օրենսդրությունը նախատեսում է որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության ընդհանուր շրջանակ, սակայն մասնակցության ընթացակարգը լիարժեք կարգավորված չէ: Միաժամանակ, ՀԿ-ների համար անհրաժեշտ հզորությունների (իրավական գիտելիքների եւ համապատասխան հմտությունների) պակասը, ինչպես նաեւ արդյունավետ մասնակցության համար միասնական հարթակի բացակայությունը նվազեցնում են մասնակցության իրավունքի իրացման որակը, ազդեցությունը եւ արդյունքները:

Նշված խնդիրներն ընդգծում են ոլորտի համարժեք իրավական կարգավորման, ինչպես նաեւ որոշում ընդունողների եւ քաղաքացիական հասարակության միջեւ կառուցողական երկխոսության ամրապնդման անհրաժեշտությունը: Դա բխում է նաեւ «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից:

Հիմնական արդյունքներ

1. Օրենսդրության եւ պրակտիկայի ուսումնասիրություն. ուսումնասիրությունն իրականացվել է շրջակա միջավայրի վերաբերյալ որոշում կայացնողների եւ նշված ոլորտի քաղաքացիական հասարակության շրջանում անցկացված հարցման արդյունքների, գործող ազգային օրենսդրության եւ ձեւավորված պրակտիկայի, ինչպես նաեւ Օրհուսի կոնվենցիայի տարբեր մարմինների (Կողմերի հանդիպում, Բյուրո, Աշխատանքային խմբեր, Համապատասխանության կոմիտե) կողմից ընդունված փաստաթղթերի համեմատական վերլուծության հիման վրա :

2. Շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի գործընթացին հասարակության մասնակցության ուղեցույցի մշակում եւ հրատարակում. ՈՒղեցույցը նախատեսված է քաղաքացիական հասարակության անդամների համար: Այն հնարավորինս մատչելի կերպով բովանդակում է անհրաժեշտ իրավական գիտելիքների եւ հմտությունների ամբողջությունը, որոնք կարեւոր են իրավական ակտերի մշակման գործընթացին իրազեկված եւ արդյունավետ մասնակցելու համար:

3. Դասընթացներ մարզերում եւ Երեւանում: դասընթացների շրջանակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին փոխանցվել են անհրաժեշտ գիտելիքներ էկոլոգիական օրենսդրության համակարգի, իրավական ակտերի մշակման գործընթացի եւ մասնակցության հնարավորությունների

վերաբերյալ: Մասնակիցները ծանոթացել են իրավական տեխնիկայի հիմնական կանոններին եւ իրավական ակտերի հետ աշխատանքի սկզբունքներին:

4. Էլեկտրոնային հարթակի ստեղծում (www.ecolex.am), որպես միասնական հարթակ շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին հասարակության մասնակցության համար: Կայքում տեղադրվում են ինչպես ՀՀ Ազգային ժողովի, այնպես էլ ՀՀ բնապահպանության նախարարության եւ այլ շահագրգիռ գերատեսչությունների կողմից մշակված, շրջակա միջավայրին առնչվող իրավական ակտերի նախագծերը: Կայքում հասանելի էլեկտրոնային գործիքների համակարգը հնարավորություն է տալիս օգտվողներին անմիջապես նախագիծը մշակողին ներկայացնել համապատասխան դիտողությունները եւ առաջարկները, որոնք միաժամանակ մատչելի են կայքի բոլոր այցելուների համար: Այսպիսով, ապահովվում է որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը, նպաստելով որոշում ընդունող մարմինների հաշվետվողականության բարձրացմանն ու պետական մարմին, քաղաքացիական հասարակություն կառուցողական համագործակցությանը.

5. «Շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին հասարակայնության մասնակցության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման եւ ուղեկցող փաստաթղթերի փաթեթի մշակում: իրավական ակտի նախագիծը եւ ուղեկցող փաստաթղթերը մշակվելու են ՀՀ բնապահպանության նախարարության եւ ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ՝ քաղաքացիական հասարակության անդամների մասնակցությամբ:

2014 թվականին տպագրվել է «Հայաստանի Հանրապետության հողային իրավունք իրավական ակտերի ժողովածու»-ն: Ժողովածուն հնարավորություն է տալիս մեկ աղբյուրից ստանալ հողային հարաբերությունների իրավական կարգավորման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: Այն բովանդակում է հողային իրավունքի ոլորտում ՀՀ ազգային իրավական ակտերի և ՀՀ վավերացրած

միջազգային պայմանագրերի համապատասխան նորմերը, ինչպես նաև ներառում է ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները՝ արտահայտված նշված նորմերի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ:

Ժողովածուն կարող է օգտակար լինել բուհերի դասախոսների, ասպիրանտների, ուսանողների, հողային հարաբերություններին առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների, դատավորների, դատական դեպարտամենտի և դատախազության աշխատակիցների, փաստաբանների, միջազգային և հասարակական կազմակերպությունների, գործարարների, ինչպես նաև հողային իրավունքի խնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ն վերջին երկու տարվա գործունեության ընթացքում զգալի աշխատանք է տարել էկոլոգիական իրավունքի տարբեր հարցերի շուրջ հետազոտական աշխատանքների կատարման, ինչպես նաև լիազորված պետական մարմինների հետ համագործակցության շրջանակներում ՀՀ էկոլոգիական օրենսդրության համակարգը կազմող իրավական ակտերի կատարելագործման ուղղությամբ:

ՀԿ-ի կողմից կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ դասախոսություններ, անցկացվել են իրավական ակտերի նախագծերի քննարկումներ և դրանց վերաբերյալ ներկայացվել են եզրակացություններ, կատարվել է գործող էկոլոգիական օրենսդրության վերլուծություն, տարբեր մասնագիտական խմբերի համար անցկացվել են էկոլոգիական իրավունքի դասընթացներ:

«Շրջակա միջավայրի իրավական
պահպանության կենտրոն» ՀԿ նախագահ պրոֆ. Ա. Իսկոյան

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿ

«Շրջական միջավայրի իրավական պահպանության կենտրոնը» (ՇՄՊԻԿ) առաջին հասարակական կազմակերպությունն է Հայաստանում, որի նպատակն էր էկոլոգիական փաստաբանության իրականացումը: Նման կազմակերպություններ հիմնադրվել են միայն ԱՊՀ մի քանի երկրներում (Հայաստան, Բելոռուսիա, Մոլդովա, Ուզբեկիստան, Ուկրաինա) Ամերիկյան իրավաբանների Ասոցիացիայի «Իրավական նախաձեռնությամբ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համար» ծրագրի շրջանակներում:

ՇՄԻՊԿ ՀԿ-ն էական դերակատարում ունի քաղաքացիական հասարակության ներուժի օգտագործմամբ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործունեության իրականացման խթանման հարցում՝ դրանով իսկ նպաստելով իրավունքի գերակայության ամրապնդմանը:

Կենտրոնը կարևոր ներդրում ունի ոչ միայն ազգային, այլև միջազգային մակարդակում էկոլոգիական քաղաքականության զարգացման գործում: Մեր կազմակերպությունը տարբեր խմբերի համար իրականացնում է էկոլոգիական-իրավական կրթության ծրագրեր՝ դրանով իսկ բարձրացնելով հասարակության իրազեկվածության աստիճանը շրջակա միջավայրին վերաբերող հարցերում:

Մեր գործունեության կարևոր ուղղություններից է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային լսումների կազմակերպումը, ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացումը: Բացի այդ, Կենտրոնը կանոնավոր կերպով կազմակերպում է կլոր սեղաններ, սեմինարներ, որոնց մասնակցելու համար հրավիրվում են էկոլոգիական ոլորտում գործող ոչ կառավարական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ, պաշտոնատար անձինք և մասնագետներ ՀՀ բնապահպանության նախարարությունից, այլ նախարարություններից ու գերատեսչություններից, ՀՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովի կազմում ընդգրկված պատգամավորներ, ինչպես նաև բոլոր այն անձինք, ովքեր հետաքրքրված են քննարկվող հարցերով: Այս մոտեցումն առանձնապես կարևորվում է Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացման տեսանկյունից: Այն բարձրացնում է էկոլոգիական օրենսդրության վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը ոչ միայն հասարակության, այլև պետական մարմինների շրջանում՝ նպաստելով էկո-իրավական գիտակցության մակարդակի բարձրացմանը:

Կենտրոնի աշխատանքներում ներգրավված են բարձր որակավորում ունեցող իրավաբաններ, ովքեր մասնագիտացած են էկոլոգիական իրավունքի և քաղաքականության ոլորտում և մատուցում են խորհրդատվական ու փորձագիտական ծառայություններ:

Հաշվի առնելով էկոլոգիական օրենսդրության նշանակությունը շրջակա միջավայրի որոկի ապահովման գործում՝ Կենտրոնը Ամերիկյան իրավաբանների Ասոցիացիայի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Իրավական նախաձեռնության աջակցությամբ Հայաստանում առաջին անգամ հրատարակել է «Էկոլոգիական օրենսդրության ժողովածու»: Բացի այդ, հրատարակվել են մի շարք գիտագործնական մեկնաբանություններ, ձեռնարկներ, բրոշյուրներ, բուկլետներ, 60-ից ավելի գիտական հոդվածներ, որոնք առնչվում են քաղաքացիների էկոլոգիական իրավունքներին և Օրհուսի կոնվենցիայի իրականացմանը:

Կազմակերպությունը մասնակցություն է ունենում իրավական ակտերի նախագծերի մշակման գործում համագործակցելով ՀՀ ԱԺ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը: Կենտրոնը եզրակացություններ է տալիս մի շարք օրինագծերի և մոդելային օրենքների նախագծերի վերաբերյալ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի աշխատանքների շրջանակներում:

Կենտրոնը ներգրաված է եղել դրական ելքով մի շարք դատական գործընթացներում, որոնք վերաբերել են քաղաքացիների էկոլոգիական իրավունքների պաշտպանությանն ու էկոլոգիական իրավունքի նորմերի իրացմանը:

Կենտրոնը կարևոր դերակատարում է ունեցել հատկապես Հայաստանի Հանրապետության կողմից Օրհուսի կոնվենցիայի վավերացման աշխատանքները նախաձեռնելու և խրախուսելու հարցում: Կենտրոնը նաև կազմել է Դանիայի Օրհուս քաղաքում 1998 թվականին անցկացված 4-րդ նախարարական կոնֆերանսին ներկայացված Հայաստանի Ազգային Զեկույցը:

Ելնելով վերը շարադրվածից, գտնում ենք, որ «Շրջական միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ի (EPAC NGO) գիտելիքները և փորձը կարող են նպաստել այս ոլորտի ինչպես օրենսդրության կատարելագործմանը, այնպես էլ իրավակիրառ պրատիկայի զարգացմանը:

«Շրջական միջավայրի իրավական
պահպանության կենտրոն» ՀԿ
նախագահ պրոֆ. Ա. Իսկոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Էլեկտրոնային տեղեկանք: Բեռնվել է՝ 2016-05-11-ին, www.e-register.am կայքից:

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

Հասարակական կազմակերպություն

Գրանցման համար	**211.171.01718**
Հիմնադրման տարի	**2003**
Գրանցման ամսաթիվ	**2003-04-11**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Ստեղծման եղանակ	**Հիմնադիր(ներ)ի որոշում**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Վկայականի համար	**03Ա060028**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**39077970**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**01521019**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**43171718**
Էլ. փոստ	**-**
Կայք	**-**

Գտնվելու վայրը

Հասցե	**ՉԱՐԵՆՑԻ 31-4 / Երևան 0025 ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**530669**

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Նախագահ**
Անուն Ազգանուն	**ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ ԲԱԳՐԱՏԻ**
Անձնագրային տվյալներ	**AN0441144 2013-05-13 011**
Հասցե	**ԽԱՆՋՅԱՆ Փ. / Շ / 45 / 4 ԿԵՆՏՐՈՆ 0001 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Էլ. փոստ	**-**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ) **գրառված չեն**

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2012-06-15	**Կանոնադրության թվայնացում**
2014-03-04	**Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում** **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխություն**